ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՐԱՓԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամերիկաի համար տարեկան 4 տոլար թղթադր.
Եւրոպաի և այլ ազգերի համար տարի. 20 Ֆրանգ
Ցնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնեգիրները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց ուրէ յապետման բաժնեգինին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը (rue Vacon, 50) ամեն օր կէսօրէն յետոյ, ժամ 2էն մինչև 4 միայն։

Բ-ՏԱՐԻ ԹԻՒ 11
1886 ՄԱՐՏԻ 25
(ՄԱՐՏ. 13 2· 8·
ՇԱԲԱԹ
Կը հրատարակուի ամեն շաբաթ օրը

ՓԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցումները կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միջակ տողը 1 սանտիմ կարժէ· 1 գլխագիրը 2 սանտիմ։
Նամակ կամ ծրար պէտք է ղրկել խմբագրութեան հետեւեալ հասցէով· M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, MARSEILLE (France)

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau dela Rédaction (Rue Vacon, 50).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զհարբերութիւն եւ գաղտնապահութիւն. —1889ի Միջազգային Ցուցահանդէսը.— Կ, Պոլսի Հայերի կեդրոնական վարժարանի բացումը. — Հայեր ի Ռումանիա (Գուրիէլ.—Քեօսքէճեան. —կայաց). — Արտասահմանի լուրեր.—Ծանուցումներ:

ՉՀԱՐԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԱՂՏՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Երիտասարդ բարեկամիներ, եթէ «զհարբերութիւնը» ապրի «վերաշինութեան» հոգին և մարմինն է, ղեռ չութիւնն և գաղտնապահութիւնն էլ անչուշտ նորա այժը և յաջողութիւնն պէտք է համարած։ Առանց գորանց սուրը որքան էլ երկսայրի լինի, «հասու» չէ կարող լինել։ Սերմը «աճելու և պտղաբերը լինելու համար» սկզբնաւոր հողի մէջ «ծածկուած գաղանիք է դործուած»։ Անգղոյշ քայլը մեր «անձնաւորութեամբ» կառուցած տիրոջը ժամանելու և տապալելու պատճառ կարող է դառնալ։ Ցաւալի է այն պահը, երբ նա առանց անհրաժեշտութեան անզգուշութեամբ ապարդիւն է կորչուի։ Գնա՛նք Գողգոթա, երբ «հասել է ժամը» դառն բաժակը խմելու· սակայն «զգուշութեամբ» և «խորհրդով»։ Մեր մանուկ դործը խելացի, խորհուած, մտածուած հիմքի վերայ պէտք է դրած։ Հէնց այդ պատճառով էլ մեզ «մի ղօրեղ ընկերութիւն և նորա խորհուրդը» հարկաւոր է։ Առանց միընդարձակ «գաղտնապահ կենդրոնի» մեր «պատրաստութիւնը» միշտ թերի պիտի մնայ։ Պատերազմութեան մէջ կան բաներ, որոնց մասին վիճել և դրել միշտ կարելի է, սակայն ինչ կամայ «գործադրութեան»՝ դորա համար մեզ «գաղտնապահ» կեդրոնի և նորա «ճիւղերի» պէտք ունինք։ Կեդրոնի հարցը «Ամէնիա»ի մէջ չօչափուած է արդէն, պէտք է որ նորան կրկին և կրկին նորանոր հայեացքներով «հասուստ հոգի» վերայ ևս դրած։ Քանի ուշ չէ, ասենք սկսինք մեզ վերայ դրուած պարտքը կատարելու։

Ա. յուշեակ «Համբերութիւնը, օտարների վերայ յոյս դնելը»՝ մեր յիմարութիւնը և ապիրատութիւնը պէտք է ցոյց տայ, իսկ «անձնաւորութեամբ, զգուշութեամբ և գաղտնապահութեամբ» գործելը՝ մեր խելքը։

ԽՄԲԱԳԻՐ.

1889ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

Ամեն մարդ իմացած է որ երեք տարիէն յետոյ Փարիզի մէջ համաշխարհական Ցուցահանդէս պիտի լինի և արդէն շատ ուշադրներ, գիտնականներ, վաճառականներ, կալուածատէրներ, արուեստագէտներ և գործատէրներ, երկրագունդիս զանազան կողմերէն կը պատրաստուին գալ օգտա քաղել դիտութեան և արուեստագիտութեան հրաշալիքներէն ոմանք ի տես պիտի դրուին այդ ժամանակ աշխարհի մոլորակներին մէջ։ Մինչև անգամ ոմանք որոնք անյապաղ ոչ ունին յառաջդիմութեան և քաղաքակրթութեան, բայց իրենց նիւթական միջոցներ ապահովական են, կը ցանկան իմանալ թէ ի՛նչպես կրնան նեղուիլ այդ մեծ հանդէսին։ Մենք այսուհետ ցոյց կուտանք թէ՛ իրենց և թէ՛ անոնց որոնք ապառաջօրէն ոսկիներ կը վայելեն, այն միջոց որով կարելի է զուարճալի կերպով կատարել այդ հրաշանդիւ և օգտակար ճանապարհորդութիւնն։ Մեր ցոյց տալիք միջոց ո՛չ միայն խնայողական է առանց ո՛չ մէկ զրկում, ո՛չ մէկ նեղութիւն կրելու, այլև շահաւոր և լաւ է ամենին համար ալ, ինչպես չգտնուին նոյնպես և հարուստին համար, որովհետև թէ՛ դիւրութիւններ կընծայէ և թէ՛ տեսիլը պատուաբեր կը լինի։

Ա.հատական այդ միջոց։

Ֆլօրանոյներուն նախաձեռնութեամբ, 1889ի Ցուցահանդէսին այցելողներուն ընկերութիւններ կազմուած են Ֆլօրանոյ, Միլանի, Թիւրէնի, Լիսաբոնի, Մատրիտի, Ամէնքի և Պուէրթլի մէջ։ Իւրաքանչիւր ընկերութիւն բաց յարձակապէս անկախ է և միանգամին հետ կապուած է միայն «Ցունա–Լատին ժողովուրդներուն դաշնակցութիւն» (fédération des peuples Gréco-Latins) անունով որով պիտի ճանչցուին 1889ին։ Ամէնիաի գանազան նահանգներուն մէջ բնակող մեր հայրենակիցներ և այլևայլ տեղեր դրուած հայ գաղթականութիւններն կրնան հետևիլ այդ օրինակի և այն ժամանակ դաշնակցութիւնը կը կոչուի «Ցունա–Ամէնիո–Լատին ժողովուրդներուն դաշնակցութիւն» (fédération des peuples Gréco-Arméno-Latins) անունով։ Ա.յս նպատակով մենք կը հրատարակենք ի տարեվերջ Ֆլօրանոյի ընկերութեան կանոնները որոնք պէտք է օրինակ լինին այս մարդով կազմուելիք նոր ընկերութիւնների կանոնադրութիւններին ի հարկէ տեղական պահանջներին համեմատ կարևոր փոփոխութիւններ, կրճատումներ կամ յաւելումներ կրնան մտցուիլ անոնց մէջ։ Ա.յսպէս, շարաթական վճարումները տուրքերն և այդ չընդունելութեան համար որոշուած ժամանակը (յօդուած 4 և 20) կրնան փոփոխուիլ տեղական հանգամանքներուն համեմատ։ Պէտք է նկատի առնել նաև 30 առ հարիւր (%) զեղչերի հաշիւը որ Ֆրանսական կառավարութեան միջոցով պիտի ստացուի փոխադրական և այլ ընկերութիւններէ։

Իսկ այս նպատակով կազմուած ընկերութիւններէ յառաջ գալիք անհատական և դհանրական շահերը շատ մեծ են։ Նախ՝ իւրաքանչիւր ընկերութիւն որ Փարիզ հասնի, պաշտօնապէս և պատուով պիտի ընդունուի Ֆրանսական կառավարութենէն որ ամեն միջոցներ ձեռք պիտի առնէ ընկերութեան հանգիստ և ապահով կերպով Փարիզի մէջ տեղաւորուիլը ապահովելու համար ուր ապրուստը չափազանց կը սղանայ այդ միջոցին, մանաւանդ օտարականներուն համար։ Ֆրանսական կառավարութիւնը հոգ պիտի տանի որպէսզի ընկերութիւններուն անդամներուն հարկ եղած բոլոր ծանօթութիւնները մատուցուին, անոնց պիտի տայ այցելել Ցուցահանդէսին և Փարիզի յիշակերտներուն. մէկ խօսքավ, անոնց արամադրութեան տակ պիտի դնէ գործակատարներ, ամեն տեսակ տեղեկութիւններ և զբօսանքները իրենց հայթայթելու և կարելի եղածին չափ տեղի օգտուներ իրենց մատուցանելու համար։ Անոնց ամեն տեղ կէս դնով պիտի չնորհի պիտի տայ և այլն, և այլն։ Անհատական չահերը պիտի կրնան առաջ գալ որոնք անատրակայս հրապուրիչ են ամենին համար այ։ Գաղով ընդհանրական չահերին, ադանք ա՛յ տեղի մեծ կը լինին մեր տղի համար։ Մի այնպիսի բոպէի մէջ ուր կը չանանք Եւրոպաի ուշադրութիւնը դարձնել մեր վրայ, արևմտեան մէկ մեծ երկրի մօտենալը պատճառ կը դառնայ փառաւոր բոպէս վերանորոգելու այն դարաւոր կապերը որոնք դմեզ կը միացնեն Ֆրանսային, Ֆրանսային զոր միշտ նկատած ենք իբր մեր մեծ քոյր ազգը։ Մենք Հայերս չենք կարող մոռնալ որ Լատինեանների ժամանակ Ֆրանսացիների հետ միասին պատերազմած ենք քաղաքակրթութեան համար կըռուի մինչև դաչտերին վրայ և 1870ին ալ կամաւորներ պրկելով կըռուելու ֆրանսական դրօշին տակ, ցոյց տուինք թէ մենք Հայերս ապերախտ չենք։ Ֆրանսան ալ իր կողմէ չէ գադրած մեր վրայ մնածելէ, նոյն իսկ այն վայրկենին որ պարտաւորած է մի չեղօք քաղաքականութիւն պահել, դարձեալ Ֆրանսական դեղութեան և նորա վեհանձն մտքի չնորհակալ է որ այսօր հայկական խընդիրը օրակարգի մէջ կը դանուի։

Ուրեմն արդ՛ի հարկաւոր է որ մեր հայ հայրենակիցներ կազմեն իրենց մէջ վերոդրեալ ընկերութիւնները, որոնք միանգամայն թէ՛ կը բարձրացունեն մեր վաճառականական, արհեստագիտական և հոդագործական դիրք և թէ՛ մեր երկրի վրայ կը հրաւիրեն օտար վաճառականութեան ուշադրութիւնը որի բնական հետևանքը կը լինի ներմուծել այնտեղ վերանորոգութիւններ և հաղորդակցութեան դիւրութիւններ. վասն զի մեր երկիր այժմ դժբաղդաբար անծանօթի մնացած է դեռ եւրոպացի վաճառականներին։ Ֆրանսան կառավարութիւնը այս կերպով մի տեղ ալ կը չնորհէ մեզ Ցուցահանդէսին մէջ, հան ի տես դնելու համար մեր երկրի արհեստագիտական և հոդագործական զանազան արտադրութիւններն, ինչպէս նաև նորա ամէն մէկ նահանգի տարազները (costume)։

Ա.յս նպատակով կազմուելիք ընկերութիւնները պէտք է որ մեզ իմացունեն իրենց կազմութիւն և հաղորդեն իրենց կանոնադիրը որպէս զի մենք ալ կարենանք գանազանել տալ Ֆրանսայի Ադմինիստրական նահանգութեան Ա.յդ ընկերութիւններուն կազմութեան և Ցուցահանդէսի կերպին և պայմաններին վերաբերեալ բոլոր տեղեկութիւնների համար դիմել ուղղակի հետևեալ հասցէին։

Monsieur Jean Broussali
5, Rue Casimir Delavigne, PARIS.

ՄԵԾ.

(1) Մեր հայրենիքն Մեծ. Հայքն. Ամեն ոք իր ծագումն ու ծննդավայրն ունի սիրելի, թանկագին։ «Ինչպես» բնիկ հայ՝ ես ևս ունեցել եմ իմ ծննդավայրը, որ Վասպուրականի գավառներից մեկն է։

ԺՈՒՌՆԱԼԱՆԴ

ՎԱՌՎԱԾ ԴԱՐԵ

Ծնունդ 1.—1883 Մարտ 1ին, ժառանգած ի ծնողաց ոչ մեծ ինչ, բայց ոչ ալ աննշան կալուածք մը, «մեկ ձեղքի» չափ։ Ուսումնասիրած տարիներս ես ինձ ինքնուրույն զգացի, երբ ծնողքս ինձ ետևէս չէին գար, ինչպես ուրիշ ուսանողներ։ Ես ինքնին ինձ համար ուսումնական ծրագիր մը կազմեցի, որ ինձ

նակ որ կարելի լինի նախապես են-թարկել Ընդհանուր ժողովի քննա-կութեանը։

Յօդ. 24—Իւրաքանչիւր ընկեր պի-տի ընդունի մի օրինակ այս կանո-նադրէ, որին կցուած կը լինի իւր ընդունելութեան վկայագիրը։

Վաւերացուած 1885 փետրվար 13ի Ընդհանուր ժողովին մէջ։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

(Ստորագրութիւններ հինգ անդամներից)

ԲԱՑՈՒԻՄ ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ Վ. ԱՐԺԱՐԱՆԻՆ

—

Դասախօսութեանց սկսումը

Տարիներէ հետէ յուզուող խնդիր մը երկի արդեամբ ստացաւ իւր լուծումը։ Կեդրոնական վարժարանը բացուեցաւ վերջապէս։ Այլեւս թերահաւատութեան տեղի չմնաց։ Արդարեւ, բացման հանդի-սաւոր արարողութիւնն երկի տեղի չու-նեցաւ. որովհետեւ եկեղեցւոյ բակին մէջ սկսուած չինութիւնք թաղային վարժա-րանի եւ ազգային պաշտօնարանաց՝ չեն աւարտած դեռ, և կարելի չէր պաշտօ-նական մարմիններ և բազմութիւն ժողո-վըրդեան հրաւիրել այնպիսի տեղ մը։ Այս հանդէս, հետեւապէս, յետաձգուած է, մինչեւ որ այս ամէն չինութիւնք վերջա-նան։ Երկի պարզապէս դասախօսութեանց սկզբնաւորութիւն մ'եղաւ։ Աւտուն 50 աշակերտք եկած էին։ Ներկայ էին խնա-մակալութեան անդամք և դասատուները մէնչ մէջ հաւաքուելէ յետոյ, ժամ 3ին, Գեր. Յովսէփ Ծ. Վ. Այվազեան, քարոզիչ եկեղեցւոյն, պարագային յար-մար խօսքերով, խրատներով և օրհնու-թեամբ ծանոյց դասախօսութեանց սկը-սիլը։ Պատ. խնամակալութեան փոխա-նորդ էֆ. ի դիմաց խնամակալու-թեան խօսեցաւ այս նոր հաստատուա-թեան նպատակին և ուղղութեան վրայ։ Կեդր. Վարժարանի «Կարգապահ» Մի-նաս Չերազ էֆ. ապա խօսք առաւ, բարի վարուց և աշխատութեան պէտքը բա-ցատրելով, վարժարանի ուսմանց համար ընդունուած մէթոդը պարզելով, և ի վերջոյ յորդորելով աշակերտներն որ ի-րենց աշխատութեամբ արժանի հանդի-սանան մեծանուն հանգուցեալին յիշա-տակին (Տ. Ներսէս Պատրիարքին), որոյ առաւելագոյն հոգածութեան առարկայ-ներէն մին ալ այս դպրոցի բացումն ե-ղած է։

Ապա, ժամանակացոյցի կարգաւ, ու-սուցչութեան դասատու Պօյաճեան Յակոբ էֆէնտի իւր դասերն սկսաւ՝ թուաբա-նութեան վրայ ընդհանուր ներածու-թեամբ մը, յետ որոյ երկրաչափութիւն և գրահաչիւ պիտի աւանդէ հիմնապէս։ Յետոյ Ֆրանսերէնի դասատու Պ. Լամ-պուէլ Նիւման սկսաւ իւր դասերէ։

Տր. Յակոբեան էֆ., առողջաբանու-թեան դասատու և Կեդր. Վարժարանի բժիշկ, մի առ մի քննեց տղայոց առող-ջական վիճակը։ Նաև Կեդր. Վարժարանի նորոգութիւններն աչքէ անցուց առող-ջապահական տեսակէտով։

Ի վերջոյ, նկատելով թէ աշակերտաց չատեր պահանջուած դասագրեանց և-պատրաստութիւնները չունէին տակա-ւին, և թէ քանի մի օր միջոց տալ հարկ էր որպէս զի դասարանաց ներկերը չոր-նային և քանի մը մանր մունր նորոգու-թիւնք վերջանային, դասախօսութեանց չարունակութիւնն յետաձգեցաւ առաջի-կայ երեքշաբթի առաւր, (քանի որում եր-կուշաբթի ասն է Ս. Աստուածածնայ ծը-նընդեան)։

* * *

Հետեւեալն է ցուցակ այն դասատուաց, որք կը պաշտօնավարեն կեդր. վարժա-րանի առաջին տարւոյ չրջանին մէջ։

Գեր. Յովսէփ Ծ. Վ. Այվազեան, Կրօնա-գիտութիւն։

Մ. Գարագաշեան Է.Ֆ., Հայերէն (գրաբար).

Ն. Պէրպէրեան Է.Ֆ., Հայերէն (աշխարհա-բար. Գրագիտութիւն).

Թովմաս Է.Ֆ. Թէրզեան, Ֆրանսերէն.

Պ. Էմմանուէլ Նիւման, Ֆրանսերէն (գործ-նական վարժութիւնք).

Ֆրանսացի դասատու ի Լիսէ.

Միհրան Է.Ֆ. Աբիկեան, Օսմաներէն։

Թուրք դասատու մը, (Դեռ չէ որոշուած).

—գործնական վարժութեանց համար.

Յակոբ Է.Ֆ. Պօյաճեան, Ուսողութիւն (Մա-թէմատիք).

Միհրան Է.Ֆ. Չերազ, Պատմութիւն, Օսմ. Ազգ. և ընդհանուր.

Գ. Մարգարեան Է.Ֆ., Աշխարհագրութիւն, բնական և քաղաքական.

Նշան Է.Ֆ. Աճդրհատեան, Բնագիտութիւն.

Նշան Է.Ֆ. Դուկասեան, Բնալուծութիւն (ուսուցիչ նոյն դիտութեան ի Մխիթէ.)

Մ. Քէշիշեան Է.Ֆ., Տոմարակալութիւն ու վաճառագիտութիւն։

Սղագրութեան դասատուն որոշուած չէ դեռ։ Կը լսենք թէ Նորատունկեան Յարութիւն էֆ. և Գասպար Չերազ էֆ. կը խորհրդակցին սղագրութեան հայերէն մէթոտ մը որոշելու համար, և երկուքէն մէկը պիտի ստանձնէ անոր ուսուցումը։

Ինչպէս յայտնի է, Կեդր. Վարժարանի ամբողջ ընթացքն հինգ տարի պիտի տեւէ, և վերոգրեալներէն զատ կարդ մը նոր ուսումներ ալ պիտի աւանդուին յա-տուկ դասատուաց միջոցաւ յորոց ո-մանք արդէն որոշուած են։

(ԱՐԵՒԵԼՔ)

ՀԱՑԵՐ Ի ՌՈՒՄԱՆԻԱ

—

ՊՈՒԿՐԷՇ

Պուքրէշէն սեպտ. 8ին գրուած մի նամակէ կը քաղենք հետեւեալ տո-ղերն հրատարակութեան համար։

«Այստեղ երկու ընդերութիւն կայ. մին Արարատեան անուն՝ որ աղքա-տաց օգնելու նպատակով կազմուել է հարուստներէն, իսկ միւսն Հայրենա-սիրաց ընկերութիւն՝ որ պանդուխտ-ներէ կազմուել է։ Եթէ այս ընկերու-թիւններ միանային, որպէս փափաքն էր ճշմարիտ ազգասիրաց, զօրաւոր մարմին մը կը լինէր. իսկ մեկզմեկէ անջատ ճիգերով երկուքն ալ ի կոր-ծանում կերթան։ Արդէն Հայ-բենասիրաց ընկերութիւնը այնքան տկարացած է որ դրեթէ կազմալու-ծուելու վտանգին մէջ է։ Թէև իւր բացառութիւն, բայց կը գտնուին հարուստներուն մէջ ալ ուսումնա-սէր և ազգասէր անձինք որոց մին է Մկրտիչ էֆէնտի Փափազեան, որ թէպէտ ո՛չ Թագաւոր է և ո՛չ ալ հոգաբարձու, սակայն իւր ծանօթ ազ-դատիրութեամբ և աղքատասիրու-թեամբ մինչև այսօր անձնուէր ե-ղած է ազգին յառաջդիմութեան»։

ԲԼՕՍԹՆԵՁ

Տեղւոյս հայ գաղթականութիւնը 30ի չափ ընտանիքէ և 200ի չափ դատաստի պանդուխտներէ կը բաղ-կանայ, որոնք 8 տարիներէ ի վեր կը դեգերին այս կողմերը բեռնակրու-թեամբ. սակայն ցաւալի է որ իրենց աղքային դիպուածը մեռած է դրե-թէ ի մինչև ցարդ լրագիր մը չեն ստանար. ընկերութիւն չունին նոր պի-տի կազմակերպուի. ունին մի եկեղե-ցի, իսկ դպրոց իսկզբանէ անտէ ստ-ւորութիւն եղած չէ այստեղ. հայ մանկտին ուրախայ դպրոցը կը յաճա-խէ։ 1878 թուականին չատ աշխատե-ցանք այստեղ դպրոց մը հաստատ-ելու. մի քանին հաւանած էին տեղւոյս բնիկներէն, իսկ չատերը չը-համաձայնելով չյաջողեցաւ։

Ստատիս տեղեկացանք որ Իպրա-յիլի մէջ ալ 150ի չափ գաւառացի հայ պանդուխտներ կը գտնուին որոնք բեռնակրութեամբ կը պարապին։

1886 սեպտ. 7/19 ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱԶԸՃԵԱՆ

կալաց

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

—

Ժընեվէն կը հեռագրեն սեպտ. 23ին հետեւեալները. «Ռուսիան մեծ այժմը կը համախմբէ Դանուբեան իշխանու-թիւններուն ահմանագլխին վրայ։ Զա-

րը որոշեր է գրաւել Պուլկարիան և-թէ Մեծ Սպրանիէն նորէն ընտրէ Պաթէնպէրկի իշխանը։ Ռուսիոյ ընտ-րելին է միշտ Օլէնպուրկի Ալեք-սանդր դուքսը որ Պ. Ֆրէյսինէի հա-մակրութիւնն ալ կը վայելէ, թէև Սօֆիոյ Ֆրանսական դործակատա-րին հրահանգ տրուած է ամենակա-տարեալ չեզոքութիւն պահել իշխա-նական ընտրելի ցոյց տալու մասին։ Անգլիան և Իտալիան միանակ կը ձնան Պաթէնպէրկի իշխանին վերընտրու-թիւնը պաշտպանելու համար։ Ավստ-րիան և Անգլիոյ առաջարկներուն հա-կառակ Տանիմարքոյ վալտէմար իշ-խանը կը մերժէ ընտրելիութիւնը, հետեւելով իւր հօր և իւր ապագա-նի, Զարի խորհուրդին։

—Կ. Պոլսէն կիմացուին թէ այժ հզգապես խմացուած է Խեմնպուրկի դուքսին Կ. Պոլիս գանուելուն պատ-ճառը։ Անգլիան կուզէ Կրէտէ կղզին գնել 4 միլիոն անգլիական ոսկի (100 միլիոն ֆրանգ) տալով (1)։ Անգլիա-ցիները չեն ծածկեր իրենց դիտաւո-րութիւն որ եթէ Բ. Դուռը մերժ իրենց առաջարկ, իրենք պիտի տի-րեն այդ կղզւոյ և ասոր համար է ո պատերազմանաւեր պատրաստութեան մէջ կը գտնեն։ Խեմնպուրկի դուքսը կը պահանջէ նաև որ Տարտանէլի անցքը բաց մնայ Թողուի Ռուսիոյ հետ պատերազմի բռնուած ժամանակ։ Մի չերկրական անգլիական նաւատորմ որ այժմ ամբողջովին կը գտնուի Մի-տիլի կղզւոյ չուրերուն մէջ, ունի 4,000 մարդ և 7 զրահաւոր՝ նաւեր որոն 32 խոշոր թնդանօթներ կը կրեն։ Ֆրանսական մի ամիզօ չոգենաւ կ սպասուի Կ. Պոլիս որ Պ. տը Ձրէյ սինէի վճռական հրահանգներն կ բերէ Կ. Պոլիս Ֆրանսական դեսպա նին որպէս զի սա իւր բոլոր ազդե ցութիւն ի գործ դնէ Սուլթանի վրայ, Կրէտէին Անգլիոյ թողուիլ արգիլելու համար։

—Ռուսական լրագիրներն դարձեա ակած են փաստարանել Պուլկարիա գրաւելու պէտքը։ Զօրավար Քօ պարսի հրահանգ տրուած է որ ի բոլոր ազդեցութիւն ի գործ դնէ Ռուսիոյ անձնուէր մի իշխան ընտ րելու համար։

—Standardին կը հեռագրեն վէ էննայէն որ Թիւրքիան մեծ պատրաս տութիւններ կը տեսնէ։ Մակեդո նիոյ մէջ 50,000 զօրք կայ հաւա քուած. վերջերս բազմաթիւ զօրքեր ե լան Տէտէ Աղաճ որոնք կերթան միան ուսմանական սահմանագլխին վր եղող զօրքերին։ Փոքր-Ասիոյ մէջ նոյնպէս պատրաստութիւններ տեսնուին։ Էրզրումը կամրացնեն երկու գունդ հեծելազօրքեր և երկ գունդ թնդանօթաձիգ զօրքեր զր կուած են Էրզրում, բերդին զօրաց պահպանութեան համար։

---

(1) Տեսնել այս նկատմամբ «Արմենիա» Տպր. թուին մէջ Globe լրագրին թարգմ նուած յօդուածը։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԴԱՄԱՌ–ՓԱԹԻՊԱՑԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«Թիֆլիզի հայ. գրբ. հրատրկբ. քնկերքե.»

==

Մեծանուն բանաստեղծ Դամառ–Փաթիպաի (Ռ. Պատկանեանց) ոտանաւորները պարունակող մի գիրք է 176 երեսներէ բաղկացած։ Սկիզբը դրուած է հեղինակին պատկերը։ Դամառ–Փաթիպաի բանաստեղծութիւնները մի քանին արդէն ծանօթացուցած լինելով մեր ընթերցողներէն, աւելորդ կը համարինք դարձ մը մասին։

Կը ծախուի «Արմենիա» լրագրի խմբագրատունը ի գին 1 ֆրանգ և 75 սանթիմի։ Մարսէյլէ դուրս ամեն տեղի համար 2 ֆրանգ փոստի ծախքովն հանդերձ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՑ ԳԻՒՅԱԶՆՈՒՀԻՄ գին 50 սանթիմ.
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ » 20 »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ » 40 »

Կը ծախուին Մարսէյլ, «Արմենիա» լրագրի խմբագրատունը։

Ուտար քաղաքացիներին կը դրկուի փոստով, երբ վերոյգրեալ գիներով Ֆրանսական, բրրական կամ ռուսական փոստի թղթադրոշմ դրկեն «Արմենիա»ի խմբագրատունը։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ

Ե Ո Ի Ե Ր

ՀԱՑԻ ՄՈՌԱՑՈՒԱԾ ԴԱՍԸ ՊԱՇՏՊԱՆՈՂՆԵՐԻՆ

Հայաստանի վիճակին նկատմամբ պատուէր մաղթանքներ և մտածումներ պարունակող մի տետրակ է։

Հայաստանի բնակիչներէն Գ. Իսայէլի գրած այդ հայրենասիրական յաղմա կը ծախուի «Արմենիա» լրագրի խմբագրատունը։ Գին 40 սանթիմ, փոստի ծախքովն հանդերձ։

ՄԱՆՈՒԷԼ ՄՒՐԱՆՈՐԵԱՆ

ՅԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅՐԵՆԱԿ ԳԱԻԱՌՍ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ

ԵՂԱԴՐՈՒԹԻՒՆԲ ՍԱՐԼԻՆ ԵԻ ՋՈՐԼԻՆ

ՀՆԻՆ ԵԻ ՆՈՐԼԻՆ ՊԻՏԱՆԻ ԳԻՏՆՈՑ

==

Մասն Ա. Բ. Գ. (առարտ)

Հայաբնակ գաւառաց ընդհ. նկարագրութիւն, տեղագրութիւն, աշխարհագրութիւն, չէն և ամայի վանօրէից նկարագիրն, աւանդութիւնք և այլ նիւթեր պարունակող Ազգ. գործ մի է, ամենակարևոր և հետաքրքրական գրուած չրջահայեաց և շատ նուրբ տեսութեամբ արժանի ամեն Հայու յաճախակի վերծանութեան։

Կը գտնուի բոլոր գրավաճառաց քովկեդրոնատեղին է Պօլիս Պահէ–գափու հայագործի փոտան դէմ Գ. էֆ. Ճոնեանի վաճառատուն, թիւ 11։

Գին — Ա. և Գ. մասերն 8 ական, իսկ Բ. մասն 10 դահեկանի։

Վարժարանաց համար գոհացուցիչ զեղչ կը լինի, և յանձնարարութիւնք ճշդիւ կը կատարուին։

LA TRIBUNE DES PEUPLES

Ինչպէս կը տեսնուի լրագրիս Դ երեսը դրուած ծանուցումէն, Tribune des Peuples *ընկերվարական ամսաթերթի յուլիս—օգոստոսի թիւը հայերի նկատմամբ համակրական յօդուածները կը պարունակէ։ «Արմենիա»ի խմբագրութիւնը բաւական քանակութեամբ ստացած է այդ թիւէ, պիտի հաճի իւր բաժնորդներէ ցանկացողներին։ Մէկ օրինակը կը տրուի 25 սանթիմի Մարսէյլի մէջ. ուրիշ ամեն տեղերի համար 30 սանթիմ, փոստի ծախքովն հանդերձ։*

ՎԻՃԱԿԱԳՀԱՆՈՒԹԻՒՆ

ՋԱՆԱՋԱՆ ԸՆՏԻՐ ԳՐԵԱՆՑ

Բաւական ներքսեան ընկերութիւնը 1300 թիւ վիճակահանութեան տոմսերը չրջաբերութեան հանած է որոյմէ 600ը պիտի չահին զանազան ընտիր գիրքեր որոց անուններն նչանակուած են տոմսերուն վրայ։ Վիճակահանութիւնն պիտի կատարուի հոկտեմբեր 5/17ին, վերոյիշեալ ընկերութեան գրասենեակը։ Տոմսակները կը ծախուին 6 ղրուշի։ Ուղղը կրնայ «Արմենիա»ի խմբագրատունէն ալ ստանալ վճարելով 1 ֆրանգ և 50 սանթիմի։

ԲԱՖՖԻ ԳՈՐԾԵՐԸ

ԿԱՅԾԵՐ

ՀԱՏՈՐ Ա.

Ազգային վիպագիրը պրն. Բաֆֆիի գործերուն մէջ առաջինն տեղը կը գրաւեն ԿԱՅԾԵՐը։ Այս գիրքը կը ծանօթացնէ ընթերցողը տառիական և պարագական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի զանազան ցեղերի և հայերի դրութեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողները։ Մի խօսքով Թէ՛ իրր ազգային ընտիր վիպասանութիւն և Թէ՛ իրր հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գնուի այս գիրքը ամեն հայրենասէր Հայի տունն։

***

ՋԱԼԱԼԷԴԻՆ

1877ի ռուս–Թիւրքական պատերազմի ժամանակ Շէյխ Ջալալէդդինի ապշառանքին պատճառով Տաճկաստանի հայերի կրած ազէտներուն մէկ աղէեարշ նկարագիրն է։ Գրքին սկիզբը կայ հեղինակին, Գ. Բաֆֆիի պատկերը։

***

Վերոյիշեալ երկու գիրքեր կը ծախուին «Արմենիա» լրագրի խմբագրատունը. ԿԱՅԾԵՐը Հատոր Ա. 6 ֆր. և 50 սանթիմ. «Ջալալէդդին»ը, 2 ֆրանգ և 30 սանթիմ. Մարսէյլէ դուրս ամեն տեղի համար փոստի ծախքովն հանդերձ՝ ԿԱՅԾԵՐ Հատոր Ա. 7 ֆրանգ. «Ջալալէդդին» 2 ֆր. և 50 սանթիմ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՐ Ա.

կենդանական հիւսուածաբանութիւն
եւ
Մարդկային կազմախօսութիւն ու բնախօսութիւն

Ն. Տաղաւարեան էֆէնտիի այս բազմաշխատ գործն՝ որ ժամանակէ մ՚ի վեր տետր առ տետր կը հրատարակուէր, լրացած է։

Ա.յս գործն՝ իրր պիտանի մեծ աշխատասիրութիւն՝ իւր տեսակին մէջ կրնայ առաջին համարուիլ ի Հայս Կ՚ուսուցանէ ինչ որ հարկ է գիտնալ մարդս մի իւր մարմնոյ նըկատմամբ։

Պատրաստուած է իրր դասագիրք Ազգ. երկրորդական վարժարանաց առ այս արդէն ուսում։ Խորհուրդն է ձեռն մատնադիտաց զայն քննելով յանձնարարած է նորա գործածութիւնն։ Այս գիրքը կրնայ ծառայել նաև իրր առաջնորդ մանկապետական և նա մանաւանդ բժշկական վարժարանի ուսանողաց. մանաւորապ առանձինն ուսման առաջնորդ ալ կըրնայ լինիլ։ Վերջապէս այս գեղեցիկ երկին ամէն գիտասէր անձանց գրատան մէջ կ՚արժէ որ գլխաւոր տեղ մը բռնէ։

Գործոյն վերջը կը գտնուի հայֆրանսերէն բառգրքոյկ մը որ կը դիւրացնէ գիտական նորատեղծ բառից հասկացողութիւնը։

Գիրքը չուրջ 400 երեսներէ կը բաղկանայ, մաքուր տպագրութեամբ և 226 գեղեցիկ նկարը պատկերներով զարդարուած, որոց մասին հեղինակը որ եւ է զոհողութիւն չէ խնայած և արք կարի լիով կը գիւրացնեն ուսումն։

Կեդրոնատեղին է Արամեան գրատուն ի Պահչէ–գափու Համիտիէ ճաշակի թիւ 34։ Գինն է 40 ղրշ։

JOHN SARKIS

PAPASIAN

PAPETERIE — LIBRAIRIE

Magasin de Musique

RUE FRANQUE, PASSAGE CRAMER,

SMYRNE (Turquie d'Asie)

Fournitures pour Consulats, Agences, Bureaux, Écoles, etc.

Articlies pour Photographes, peintres et ingéneurs.

Cartes Géographiques et maritimes, Plans de Smyrne et photographies (vues) de différentes villes de l'Asie-Mineure.

Reliure en tous genres, et Commissoins de travaux d'imprimerie.

Tablaux, Corniches, Baguettes. *Encadrements* avec soin et précision.

Grand assortiment de Musique des plus renommés éditeurs et *Seul Dépôt* des éditions économiques de Ricordi, Peters et Litolff.

Instruments à Cordes, Pupitres-musique, Cordes pour Violon, Guitarre, Mandoline et Piano des meilleures fabriques d'Europe, etc.,etc.

On se charge de toutes sortes de Commissions.

A. H. CREET & Cie

COWNPORE N. W. P. INDES ANGLAISES

Négociants-Importateurs, Exportateurs, Commissionaires, Commissaires priseurs, Contractants (Fournisseurs) et fabricants de cuirs de toute qualité.

Ayant eu une très longue expérience dans les diverses branches sus–nommées, nous sommes prêts à recevoir des marchandises à la commission pour la vente tractative ou aux enchères publiques, dans des conditions qui seront trouvées réciproquement avantageuses et satisfaisantes.

En échange des marchandises Européennes nous pouvons fournir des marchandises fabriquées aux Indes, n'importe quelle quantité, des premiers choix comme suit :

Des jouets d'enfants de Lucknow, articles de laiton et des draps d'or de Benarès, dinanderies de Moradalad, bijouteries d'or et d'argent de Delhi, châles, étoffes de Cachemire, etc.

Ayant des locaux spacieux pour l'étalage des marchandises en commission et pour la vente aux enchères, nous pouvons en toute confiance recommander notre maison à quiconque voudra entrer en relations d'affaires avec nous, et nous serons bien aises de recevoir des communications et des échantillons dans ce but.

Références

BANK OF BENGAL ;

ROHILCNUD ET KUMAON BANK ;

AGRA BANK LIMITED.

Si c'est nécessaire, nous serons heureux de fournir d'autres références.

Toute communication doit être adressée à nous directement en anglais très détaillée, avec conditions et conventions y relatives.

ՏՆՕՐԻՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.